

ՄԱՍԻՆ

Պ Ա Ր Ի Ն Դ Է Մ

Թէ Թրէտագլեան գրութիւնը իրապէս կը գործադրուի մեր մանկապարտէզներուն մէջ, չիտակը չեմ գիտեր. բայց կրնամ ձեզ վստահեցնել թէ այդ հաստատութիւնները ամէն բանէ աւելի կը պատրաստեն ա՛յն տեսակ ազջիկներ ու մանչեր, որոնք օր մը, երկտասարդութեան սեմին վրայ պէտք չստիտան ունենան զոր օրինակ Բրոքօրիին դիմելու, պարի քանի մը սրբաբանաբարական եղանակները սորվելու համար: Հարկու տեսած էք մանկապարտէզի հանդէս մը. ամէնքն ալ իրարու կը նմանին, ու տեսարանը միշտ նոյնն է ամէնու ալ մէջ. սպասիկ մանչեր ու ազջիկներ՝ որոնցմէ շատերը տակաւին տրամադրութիւններ կը գգան իրենց մօրը կաթը քամելու, սատանի սարարիւմով մը կը դառնան անընդհատ, մինչեւ որ եղանակին վերջին խաղերը մտրին դաշնակին վրայ. եթէ գարնուող եղանակը «բոլբա» մըն է, «մազուրքա»ն չ'ուշանար անոր յաջորդելու. յետոյ «վալս»ը, «քատրիլ»ը, «բա տը քաթու»ը, «լանսքընէ»ն, վերջապէս ամէն տեսակները: Ու տղաքը, այդ թմբովկոտ ու ծղօաններու պէս քնքուշ տղաքը կը պարեն, կը դառնան, կ'ալեծ փին՝ հովի մը քահահանայքին խաղալիք դարձած փետուրներու պէս:

Չեմ Բ'րուներ սակայն թէ ի՞նչ պէտք կայ տղաքը սպասիկ հասակին վարժեցնելու այն տեսակ բանի մը՝ որ իրը մարզանք իր առողջապահիկ հանգամանքովն ալ չէ՛ որ պիտի պարձէր անչուշտ: Եթէ երբեք մանկապարտէզը ըստածը պարի հաստատութիւն մըն է, եւ

մանկապարտիզականութիւններն ալ ամէն բանէ աւելի պարի դասատուներ են, ըսելիք չունիմ. բայց կարծեմ թէ մանկապարտէզները ուրիշ բանի համար հաստատուած են, եւ թէ ապագայ սարսուղներ պատրաստելէ աւելի՝ պզտիկ տարիքէն տղուն նկարագիրը գեղեցկացնելու, անոր միտքը սրելու, մէկ խօսքով՝ մանուկին հոգին կազմելու կոչուած ունին: Ու չեմ կարծեր թէ պարը, ըլլայ «մազուրքա», «քատրիլ» կամ «լանսքընէ», կարենայ այդ յատկութիւնները տալու չափ զօրաւոր ազդեցութիւն մը ընել տղայ վրայ:

Տարիներ ու տարիներ գործածուելով հինցած այդ գրօսանքին տեղ, զոր այսօր շատ մը ազնուապետական ընտանիքներ, — մասնաւորաբար Եւրոպայի մէջ, — տակաւ կը վտարեն իրենց սալօններէն, աւելի լաւ չը պիտի բլար գործադրել ուրիշ միջոցներ՝ որոնք նուազ յոգնեցուցիչ, եւ աւելի շինիչ, աւելի օգտակար ու ազնիւ հանգամանք մը ունենային մատաղ տղոց համար: Եթէ երբեք մանչերն ու ազջիկները սպասիկուց իրարու տեսքին վարժեցնելու մտքով է որ այդ պարի դասը մտցուցած են մեր մանկապարտէզներու ծրագրին մէջ, գծուար բան մը չէ անոր տեղ գնել ուրիշ ո՛ր եւ է սիրուն ու հաճոյալի խաղ մը որու միջոցին երկու սեռերուն ալ պատկանող մանուկներ միեւնոյն կացութեան ենթարկուին: Այս նպատակով գրուած մասնաւոր գիրքեր կան՝ որոնց մէջ մէկի տեղ նմանօրինակ հարիւր եւ աւելի խաղեր նշանակուած են, ամէնքն ալ իրարմէ հաճելի,

ամէնքն ալ իրարմէ հանգստաւէտ ու գրաւիչ : Յետոյ կան մարմնամարզի փորձերը , պարզ , բնական շարժումներ ամէն բանէ առաջ՝ որոնք մարմինն յոգնութիւն տալէ աւելի թանկ կազին ճկունութեամբ մը կ'օժտեն զայն , եւ որոնք տարիքին հետ կը փոխուին , տարիքին հետ կը դժուարանան , հետզհետէ իրենց ապլիք օգուտն ալ աւելցնելով :

* * *

Այս խորհրդածութիւնները ներշնչեց ինձի այն սիրուն հանդէսը՝ որ անցեալ կիրակի տեղի ունեցաւ Իւսկիւտարի Երանուհեան մանկապարտէզին մէջ , եւ որուն ներկայ գրուուեցայ : Երկու սեռէ մանուկներ , ամէնքն ալ սիրուն , ամէնքն ալ զուարթ ու կեանքի արշաւայտին հրապուրով ընդելու զուած , երգեցին , պզտիկ հատուածներ արտասանեցին , կարճ քննութիւն մը անցուցին , մարմնամարզի քանի մը տարրական փորձեր ըրին , ամէնուն մէջ ալ ցոյց տալով յաջողութիւն մը եւ վարժութիւն մը , որ կրնայ շատ պատուարեր ըլլալ հաստատութեան : Ու բոլոր անոնք որ նամածորինակ հանդէսներու տօթիւ վարժուած էին պարեր տեսնելու , պարսպ տեղը սպասեցին . պար չկար , եւ հաստատութեան հիմնադրին՝ Տիկին Երանուհիի մէկ գեղեցիկ բանախօսութիւնը բոլորովին յուսալար ըրաւ ներկաներէն անոնք՝ որոնք այդչափ խաղերէ , երգերէ ու արտասանութիւններէ ետք , դեռ կը սպասէին որ պարի եղանակ մը պատկայ դաշնակին ստեղնաշարներէն :

Եւ սակայն ոչ ոք դժգոհ մնաց . ընդհուկառակը ամէնքն ալ շա՛տ աւելի հաճոյք ու գոհունակութիւն զգացին պզտիկներուն մարմնամարզական փորձերը զիտելով , փորձերն ալ պզտիկ իրենց պէս , թէեւ դնդերներու

զօրացման մեծապէս նպաստող , եւ ամէն մարդ սրտանց ծափահարեց Տիկին Երանուհիի բանախօսութեան այն մասը՝ որով յոյսանապէս պարերու խնդիրը կը շջափէր . — « Մենք ալ ունինք պար ու երգ , բայց ոչ թէ երեկոյթներու «տամ»եր ու «քաղալիէ»ներ պատրաստելու նպատակաւ , այլ որպէս զի մարմինն ու սիրտը մարզուին : Փափաքած չեմ պարտէզիս մէջ մեծագոյն տեղը տալ սալօնի պարերուն , նկատողութեան տանելով սա պարագան թէ շաւաղոյն է Ֆրէօպլէան դրութեան նպատակին դիմել ուղղակի , քան ծնողքներ շլացնելու մտքով թատերական հանգամանք մը տալ մանկական , այսինքն հրեշտակային պարակցին» : —

Այս խօսքերուն ճշգրտութիւնը շատ աւելի ցայտուն կերպով մը պիտի երեւայ , երբ մտածելու ըլլանք թէ այդ պարերը մեծ օգտակարութիւն մըն ալ չպիտի ունենան ապագային : Մանկապարտէզ գացող աղջկան մեծագոյն մասը կը պատկանի համետ ընտանիքներու , որոնց մէջ շատ քիչ անգամ միայն պար մը տարքելու առիթը կը ներկայանայ . սասոնց համար , պարի վարժութիւնը աւելորդ «լիւքս» մըն է , ուրիշ զիրաւ կրնան հրաժարիլ : Իսկ միւսները , անոնք որ բարեկեցիկ ընտանիքներու կը պատկանին , պզտիկուց սորված ըլլան կամ ոչ . անպատճառ պիտի ուզեն պարի մասնագէտ դասատու մը ունենալ քանի մը ամիս , ո՛ր եւ է երեկոյթի մը մէջ գոնէ այդ մասին անճարակ երեւալու վախով համակուած :

Ի՞նչ պատճառ կայ որեմն այս կրկնապէս աւելորդ դասին փարեւու : Պարերը դ'սրս մանկապարտէզին , եւ անոնց տեղը լեցնելու համար շինիչ խաղերն ու գրօսանքները չէ՛ որ պիտի պակսին :

ՄԷԲՍԷՏԷՍ

ՊԵՐՊԵՐԵԱՆ ՎՍՐԺԱՐԱՆԸ , — որուն հաստատման 25ամեակը պիտի տօնուի քանի մը ամիսէն — կիրակի օրը կատարեց իր ամառը իր հանդէսը , կրօն. Ժողովոյ ատենապետ Տ. Գրիգորիս Սրբազանի նախագահութեամբ եւ բազմաթիւ հրաւիրեալներու ներկայութեամբ որոնց մէջ կարեւոր տեղ մը կը զբաւէին մամուլի ներկայացուցիչներ ու գրագէտներ : Այդ կրթական օրինակելի հաստատութիւնը այս տարի վկայական բաշխեց ինը շրջանաւարտներու որոնք են՝ Պ. Պ. Երուանդ Հաղարապետեան , Պերճ Նազիկեան , Միհրան Սուճեան , Առնակ Ճիվանեան , Խոսրով Խորրուրզեան , Գրիգոր Կարօրեան , Մատթէոս Փափաղեան , Արշակ Մարրլեան եւ Մերկեր Ալիքսանեան :

ՀԱՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Դուն լայն ճամբեդ գրեա , ա՛ղուր ,
 Ես կ'երբամ մուր արանեսս ,
 Երջանիկ՝ այն համոզմամբ որ
 Մտով գոցե ինձի հետ ես :

Ու անխրոով կայեա նրան
 Աչքս յառած շաւղիդ , ո՛վ իմ
 Դարուկ լոյսս , պիտի սպասեմ
 Քեզի որչափ որ ես ապրիմ :

Մեկ յնդիրք մը միայն . վերջին
 Ժամուս կուգեմ որ մօսս ըլլաս ,
 Եւ երբ ամենքն ինե փախչին ,
 Դու գեթ անոյշ դիմերդ ցոյց տաս :

Եւ ամեն փառքի փոխարեն ,
 Միայն պատկերդ յստակ ու շինջ
 Հետքս տանիմ այս աշխարհէն
 Չը յիշելով ուրիշ ոչինչ :

1 Յուլիս 1901

Գ. ԶՕՀԲԱՊ

Յ Է Լ Ե Ն Ք Է Լ Ը Ր

Նազիւրաչուք Պօսթընի մօտ է , միայն երեք
 ու կէս մղոն հեռու , Քէյմարիձ քաղաքն իբր
 եօթանասուն հազար բնակիչներով : Քէյմարիձ
 ինչպէս համանուն քաղաքն յԱնգլիա , նշա-
 նաւոր է իր համալսարանովն , Հարվըրտ ,
 ամէնէն հին համալսարանը կայտառ ու խան-
 դավառ Նոր Աշխարհին մէջ , հիմնեալ 1636ին
 Ճօն Հարվըրտի բարեօրական նախաձեռնու-
 թեամբ , երբ դեռ հազիւ տասնընեք տա-
 րիներ բոլորած էին , յորմէ հետէ վաստակ-
 եալ ու բեռնաւոր նժդեհներ տաք կը կօ-
 խէին Փլիմթի ժայռին վրայ . հաստատելու
 համար , այնքան տագնապալից ու յուսահա-
 տական պարտապայից մէջ , ազգաբն , սակա-
 ւաթիւ նոր գաղթականութիւն մը , որ պիտի
 ուռճանար , զարգանար հիանալի արագու-
 թեամբ , եւ ըլլար ի մտայ առաջնակարգ ազգ
 մը աշխարհի ազգաց մէջ :

Եթէ ամէնէն հինը , նոյնպէս եւ ցարդ
 ամէնէն կարեւոր համալսարանն է Հարվըրտ

Միացեալ Նահանգաց մէջ , Աւելի քան երեք
 հազար տաներ Ամերիկացի ինչպէս եւ հե-
 աւոր երկիրներու այլ եւ այլ կողմերէ կու-
 գան . միշտ ժողովուրդ իր թեւերուն տակ ,
 իր բազմաթիւ շքեղ շէնքերն , սմանք իրենց
 հնութեամբը պատկառելի , այլք նորագոյն
 ճարտարարուեստ սճով ու գրուագներով շու-
 շաղուն , մեծանուն ուսուցիչներն որք հոն աշ-
 խատած են երբեմն կամ դեռ կ'աշխատին ,
 յիշատակն այն մեծ մարդոց՝ որք այդ սրահ-
 ներուն մէջ անցուցած են իրենց մատաղաշ տա-
 րիներն ու հոն կենաց պայքարի համար մար-
 դաւած , եռանդուն , կենսապիւր ոգեւորու-
 թիւնն որ կը ախրէ ամենուրեք շուրջանակի ,
 անմտանալի ապաւորութիւն մը կը թողուն
 այս ամէնը այցելուին մտքին վրայ :

Երիտասարդներուն , համար միայն սակայն
 բաց էին Հարվըրտի դուռները մինչեւ վերջին
 տարիներ : Հարվըրտ պահպանողական ոգի մը
 առժամ է յամառարար նոյն իսկ Ամերիկայի

յարատիրոսն, միրկայոյզ, ալեւանջ մթնոլորտին մէջ, Բայց երիտասարդուհիները, ինչո՞ւ իրենք անտեսուէին ու այս սրահներէն տաքուէին անարգարար : Բաղձացեալ բարեփոխումը եղաւ վերջապէս . եւ ահա գրեթէ տասը տարիներէ ի վեր Հարվըրտի շէնքերուն մէջ բարձրագլուխ կը կանգնի Ռէտքլիֆ Քոլէճը, հսկայ շէնք մը գեղեցիկ սեռին յատկացեալ : Եւ այդ երբեմն տարագիր սեռին ուսումնասանջ անգամներն ունին հոն այժմ իրենց նախապատրաստական վարժարանը, կը մասնակցին համալսարանին մտից քննութեանց, կ'արձանագրուին իրր ուսանողներ հաստատութեան, եւ եթէ ո՛չ միեւնոյն սրահներու մէջ երիտասարդ պարոններու հետ, ինչպէս յԹոննպուրի եւ այլուր, — Հարվըրտ այդ քայլն առած չէ դեռ . — իրենց յատուկ սրահներուն մէջ կը լսեն միեւնոյն ուսուցիչներու ճառերը, կը հետեւին ուսմանց միեւնոյն ճիւղերուն, կը փորձեն միեւնոյն անաչառ քննութիւնները, կ'ընդունին միեւնոյն համալսարանական պատիւներն ու արտոյտներ, պանծանօք կը կրեն համալսարանական միեւնոյն աւանդական գտակն ու վերարկուն, եւ այնուազ նախանձեղի, յաղթական դափնիներ կը կորզեն սակն տարի :

Հարվըրտ յոյժ խառնապահանջ է իրաւամբ իր մտից քննութեանց մէջ, Զգալաւոր ու խղճամիտ նախնական պատրաստութեամբ մըն է միայն որ կրնան երիտասարդ կամ երիտասարդուհի մուտ գտնել իր սրահներուն մէջ :

Ճիշդ տարի մ'առաջ քննութեանց այս բովէն անցնելու համար կը ներկայանար վայելչակազմ, շնորհալի, կորովի եւ միանդամայն նրբին դիմագծութեամբ իրր քանամեայ օրիորդ մը . եւ ուրիշ բազմաթիւ երիտասարդաց ու երիտասարդուհեաց նման հետզհետէ փորձեց պահանջուած քննութիւններն անգլիերէնի, գերմաներէնի, ֆրանսերէնի, լատիներէնի, յունարէնի, պատմութեան, մաթէմատիքայի, բնական գիտութեանց մէջ՝ Բնութեանց սմանց մէջ, ինչպէս զոր օրինակ գերմաներէնի մէջ, առաջին հանգիստեցաւ, եւ առաջին պատուոյ տեղը գրաւեց : Ուսմանց մէջ մին եղաւ առաջիններէն : Ավելուն մէջ կատարեալ յաջողութիւն ստացաւ, եւ

հետեւարար իր անունը յօժարակամ արձանագրուեցաւ տոմարին մէջ իրր մին ավելնէն խոստմնարից ուսանողներէն համալսարանին :

Այս փառաւոր յաջողութիւններն ու պատիւները շահող հանճարեղ գեղանի դիւցազնուհին էր Օրիորդ Հէլէն Քէլլըր, ԿՈՅՐ, ԽՈՒԼ ԵՒ ՀԱՄՐ :

Հէլէնի նախահարք Զուիցերլայէն գաղթած են յԱմերիկայ : Իր հայրը գնդապետի աստիճանի բարձրացած էր, եւ ապա խմբագիր եղաւ : Հէլէն ծնաւ 1880ին : Հոգիւ 18 ամսու էր, երբ աշխոյժ այլ դժբաղդ մանուկը բուռն ջղաձգութիւններ ունեցաւ . եւ թէ եւ իր կեանքն ազատեցաւ, բայց իր աչքերը իրենց տեսութիւնը կորսնցուցին անգարմանելի կերպիւ . ականջները իրենց լողութիւնն եւ իր մանկական լեզուն ալ, որ դեռ չէր սորված բառեր թոթովել, փակ մնաց ընդ միշտ բնականորար :

Կ'աճէր, կը զօրանար ծագիլատի Հէլէնը . բայց նոյնչափ կ'աճէր եւ կը զօրանար նաեւ իր աննման շարածճիտութիւնը : Յանդուզն, անհնազանդ, անզուտղ, անդուժ, անաստի վագրի մը կորիւնն էր աւելի քան քաղաքակիրթ բարերարոյ ծնողաց վասի . կը կոտորէր, կը թափէր, կ'աքացէր, կը խոժնէր : Անգամ մը իր մայրը դարակի մը մէջ մտած էր վայրկեան մը բան մը առնելու համար : Հէլէն որ նշմարած էր վայս, հրեց գոցեց դուռը, գարձուց բանալին եւ կըզեց վայս : Նեղ դարակ մըն էր . եւ խեղճ կիներ գրեթէ հեղձամահ ի վար կը ճգնէր օգնութիւն գտնել : Հէլէն գետիւնը փութած՝ իր սաքերովն ու ձեռքերով կը ձեռնէր վայս, ուրախութեան ճիշեր արձակելով վայրի գազանի մը նման : Ի՞նչ ընէին սարսափահար, յուսահատ ծնողք : Ի՞նչ պիտի ըլլար Հէլէն եթէ իր այս կատաղի բնազդներն աճէին իր մէջ հետզհետէ : Անօգուտ էին իրենց բոլոր ջանքերը եւ ստիպուեցան մասնագէտի մը օգնութիւնը փնտռել :

* * *

Պոսթրնի կոյրերու վարժարանին տեսչութեան գիմեցին : Հանրաձանօթ եւ յոյժ հետաքրքրական վարժարան մըն է այս, եւ թեւեւ աւելորդ չէ յիշել աստ թէ իր տեսուչն ալ արեւելցի յոյն մըն է . Մր. Անակնոս, որ

երխտասարգութեան տանը Ամերիկա գաղթած , հոն ամուսնացած ու հաստատուած է : Երտխտապարա եմ առ ինքն այն համակրութեան համար , որով ընդունեց զիս , արեւելքի ուրիշ մէկ գաւակն , եւ հաղորդեց ինձ ամէն տեղեկութիւն զոր կը փափաքէի ստանալ իր վարած գործի մասին :

Մր. Անակնոս՝ Հէլէնի կրթութեան համար յանձնարարեց Օր. Սիլվըն , մին իր վարժարանին կարող վարժուհիներէն : Բայց խեղճ Օր. Սիլվընի համար , ի՛նչ սրտառուք , ի՛նչ յուսահատական գործ մըն էր խուլ-կոյր-համր գազանարարոյ մանկան մը դաստիարակութեան ձեռնարկել :

Հէլէնի բաղդակից ուրիշ աղջիկ մըն ալ եղած էր Լուսա Պարմըն , նոյնպէս կոյր խուլ եւ համր : Օր. Սիլվըն՝ Լուսայի կրթութեան համար գործածուած եղանակը ձեռնարկեց փորձել Հէլէնի համար ալ : Առարկայ մը չօջափել կուտար Հէլէնի ջուր զոր օրինակ . եւ միեւնոյն ատեն Հէլէնի ձեռքին վրայ իր մատերով կը հեղէր ջուր բառը կոյրերու գործածուած նշանագրերով : Խաւաքարտի կտորներ ունէր , որոնց վրայ այլ եւ այլ բառեր գրուած էին ուսուցիկ գրերով : Հէլէնի չօջափել կուտար առարկայ մը , քար զոր օրինակ , եւ միեւնոյն ատեն քար բառը խաւաքարտին վրայ : Ի՛նչ անիմաստ , անտեղի միմտութիւններ էին սակայն այս ամէնը ստահակ Հէլէնի համար , որ իր անհամբեր սրտնեղութիւնը յայտնելու համար կից կը զարնէր յաճախ , բռնցի հարուածներ կը տեղար , եւ իր սուր ակուններով կը խածատէր : Օր. Սիլվըն համբերութեամբ կը շարունակէր իր ջանքերը , սպասելով այն վայրիենին , երբ Հէլէն պիտի ըմբռնէր վերջապէս թէ բան մը կուզէին հասկցնել իրեն այս նշաններով :

Եւ այդ բարեբաստիկ վայրիեանը չուշացաւ : Հէլէն օր մը ջուր կը քաշէր ջրհորէն , իր հաւատարիմ վարժուհին իր քովն էր գարձեալ : Հէլէնի չօջափել ատուա ջուրը քանիցս , եւ քանիցս ըստ սովորականին իր ձեռքին վրայ հեգեց ջուր բառը : Հէլէնի միաքն արկնցաւ յանկարծ . յանկարծ կարծես ներշնչմամբ մը հասկցաւ թէ իր ձեռքին վրայ եղած նշանները ջուր կը նշանակեն : Ինքն ալ նոյն նշանները

ըրաւ , ջուրը ցոյց տալով : Գոհունակ վարժուհին շոյեց , փայտայեց զՀէլէն հասկցնելու համար թէ ըմբռնածը ուղիղ էր : Հէլէն ուրախութենէն գետնը փռուեցաւ , եւ իր սովորական ճիշերով սկսաւ իր յաղթանակն հռչակել :

Այդ վայրիեանին սկսաւ Հէլէնի նոր կեանքը : Այլ եւս հասկցած էր , ինչ որ ամէնէն կարեւորն էր , թէ իր վարժուհին այդ նշաններով կուզէր հաղորդակցիլ իր հետ : Իր սորվելու եռանդը չափ չունէր , եւ իր վարժուհին ալ ո՛ր եւ է ջանք չը խնայեց :

Գրեթէ վեց տարեկան էր Հէլէն իր կենաց այս ամէնէն նշանաւոր թուականին , եւ տարի մը վերջ այնքան լաւ սորված էր իր գրերն եւ այնքան ընտելացած բառերու որ ո եւ է վարժ մէկը կրնար իր ձեռքին վրայ հեգելով խօսակցիլ իր հետ : Սորվեցաւ նաեւ կոյրերու յատուկ գրքեր դիւրութեամբ կարդալ իր մատներուն ծայրերովը չօջափելով : Սորվեցաւ զիր գրել անեղի նման սրածայր գործիքով մը : գրեր՝ զորս ինքը կրնար կարդալ նոյնպէս չօջափմամբ : Սորվեցաւ գրի մեքենան գործածել , այնպէս որ կրնար արագութեամբ գրել ինչ որ , թէեւ ոչ ինք , այլ ուրիշներ կրնային կարդալ : Սորվեցաւ իր մատները խօսողին շրթունքներուն վրայ դնելով՝ անոր խօսածներն հասկնալ : Սորվեցաւ վերջապէս ինքն ալ խօսիլ , եւ այնքան յստակ արտասանել իր բառերը , զորս , աւա՛ղ , ինքը երբեք կարող չէր լսել , բայց ուրիշներ կրնային շատ դիւրաւ հասկնալ :

Այսպէս ծանօթացաւ արտաքին աշխարհին , եւ անյազ հետաքրքրութեամբ հետամուտ եղաւ բնական գիտութեանց : Նոր լեզուներ սորվելու գրադեցաւ , եւ անսովոր յաջողութեամբ քիչ ժամանակի մէջ սկսաւ անդլիերէնէն՝ իր մայրենի լեզուէն գատ ուրիշ քանի մը լեզուներ խօսիլ եւ գրել : Մաթեմատիկապէն շատ չախորժիր , բայց ահաւաստիկ գրահաշիւի խնդիր մը , զոր օր մը լուծելու գրաւած էր :

$\times^5 + 2 \times^3 - 3 \times^2 + 2 \times + 1 = 0$
 Եւ այսպիսի խնդիրներ Հէլէն դիւրաւ իր մտքին մէջ կը լուծէր առանց թուղթի եւ գրիչի դիմելու : Իր սիրական գրադումներէն մին է

Երկրաչափութիւնը : Այլ եւ այլ ձեւերով թեւեր ունի , եւ զանոնք բարձրիկներու վրայ կանցընէ իր երկրաչափական պատկերները կազմելու եւ կնճատ խնդիրներ լուծելու համար :

Իր բնաւորութիւնն ալ բարդովին փոխուած է . այնքան հեղահամարոյր է եւ քաղցրաբարոյ , որ յանկուցիչ բարութիւն մը կը ցոլայ իր դէմքին վրայ , եւ ամէն անոնք որ զինքը մտէն կը ճանչնան , կը վկայեն թէ անձնուէր : մաքուր ու անարատ հոգի մը ունի :

Մանուկները շատ կ'ախորժին իր ընկերութեանէն , որովհետեւ գիտէ հետաքրքրաշարժ եղանակաւ անոնց զուարճալի պատմութիւններ պատմելու կերպը : Շատ կը սիրէ հաներեւելներ առաջարկել կամ լուծել : Ճատրակի մէջ շատ վարպետ է : Յաջող լուզուրդ մըն է , թէեւ չը կրնար ուղիղ գծով մը յառաջանալ . ջուրին մէջ , կը թիազարէ , կ'ախորժի անտառներուն մէջ թափառիլ , մուրրիլ , արկածներ ունենալ , սեպ ըլլորներէ վեր մագցիլ : Իր ձեռքը դաշնակին վրայ կը դնէ . եւ յայտնի է իր դէմքէն թէ որչա՞փ հաճոյք կ'ազդեն իրեն երաժշտական թրթուռները : Իր ծանօթներն իրենց քայլափոխէն կը ճանչնայ . « Ի՞նչ ես , Մառիլն , դուքիդ ճայնը բնցի » , կ'ըսէր որ մը իր բարեկամուհիներէն մէկին , որ սենեակը կը մտնէր : Իր ծանօթները նոյնպէս կ'որոյժ անոնց ձեռք սեղմելու եզունակէն :

* * *

1895ին ձմեռը , երբ դեռ միայն տասներջրա տարեկան էր , Հէլէն ընդունելութիւն մը կ'ընէր ի Նիւ-Եորք : Ճաշակաւոր կերպով հազուած էր համակ սպիտակ . եւ ինքն հիւրընկալն էր անշուշտ ուշադրութեան գըլ-խաւոր առարկան : Երկու հարիւրէ աւելի հրաւիրեալներ կային , յորս նաեւ մէկ քանի նշանաւոր գրագէտներ : Հէլէն զամէնքն ալ կ'ընդունէր շնորհալի կերպով եւ սիրալիբ խօսք մը ունէր ամէնուն ուղղելու : Երբ Սթէտմըն բանաստեղծը ներկայացաւ իրեն , Հէլէն չվարանեցած յայտնել իր եռանդուն գնահատումը , եւ ճարտարութեամբ կրկնեց անոր քերթուածներէն մին՝ ի մեծ զարմացումն եւ հրճուանս հեղինակին : Երբ իր հիւ-

րերն , այր եւ կին , կը բաժնուէին իր-մէ , Հէլէն խրաքանչիւրին երեսին կը դպչէր իր մտածը , փափկութեամբ , այս էր անոնց դէմքէն յիշատակ մը պահելու իր եղանակն , եւ խրաքանչիւրին անունը տալով կը խօսէր իր հետ : Ամէնէն վերջը իր քովն եկաւ իր բարեկամներէն մէկը որուն տունը այցելութեան կ'երթար յաճախ Հէլէն , եւ , այնքան տարրեր անձանց ձեռքերը սեղմելէ վերջն ալ տակաւին անմիջապէս ճանչցաւ իր բարեկամը՝ միայն անոր ձեռքը սեղմելով : Այդ իրիկունը , չը մտնամ ըսել , Հէլէն թէնիստնի բանաստեղծութիւններէն կտորներ կարգաց իր հիւրերուն հաճոյք մը պատճառելու համար :

Հէլէն ընկերութեանց մէջ կը փափաքի ընդհանուր խօսակցութեան մասնակցիլ , բայց երբ մէկը ձեռքն իր ուսին վրայ դնէ , անմիջապէս կը լռէ , գիտնալով որ ուրիշներու խօսքն ընդմիջած է : « Ի՞նչ բանի վրայ կը խօսիք » կը հարցնէ . եւ երբ նիւթն իմանայ , ինչ որ ալ ըլլայ , Հէլէն միշտ իր կողմէ յարմար գիտողութիւն մը ունի ընելու , տեղեկութիւն մը հաղորդելու : Հէլէն անկախ միտք մը ունի . անկախ դատողութեանց ու խորհրդածութեանց տէր . ինքն իրեն համար կը խորհի եւ իր եզրակացութեանց կը յանգի :

* * *

Հագերանական շահագրգիռ խնդիր մըն է խորհուրդի եւ լեզուի աննշութիւնը : Տարակոյս չըկայ թէ ի՞նչ անհրաժեշտ դեր մը կը կատարէ խորհուրդը այս աննշութեան մէջ : Առանց խորհուրդի աննշանակ ճայներ միայն պիտի ըլլային բառերը եւ քերականութիւնն ալ անկարելի : Տարակոյս չկայ նմանապէս թէ ս'ըքան կարեւոր դեր մ'ունի լեզուն : Լեզուն , եւ ի մասնաւորի գրաւոր լեզուն է որ կը հաղորդէ ապագային՝ նախորդ սերունդներու գիւտերն ու խորհուրդները . եւ այսպէս կ'ըլլայ մարդկութեան յիշողութիւնը : Լեզուն է որ կը մարմնացնէ խորհուրդը , եւ այսպէս կը պարզէ , կը լուսաւորէ , կը հաստատէ զայն : Պիտի չը խուսափէի՞ն մարդոց մտքէն բոլոր բնդհանուր գաղափարներն առանց լեզուի օգնութեան : Ինչպէ՞ս պիտի կատարէինք մեր վերլուծումներն ու համադրու-

թիւնները , մեր բաղադրութիւններն ու տար-
բաղադրութիւններն առանց բռտերու օժան-
դակութեան : Կարծեաց տարրերութիւն չը
կայ այս մասին : Բուն խնդիրը սա է թէ
կարելի՞ է բնաւ խորհիլ առանց լեզուի : Բա-
ւերու միջոցաւ չէ՞ որ կը կատարենք ամէնքս
ալ մեր խորհելու գործողութիւնը : Չը կա՞յ
ներքին ինչպէս արտաքին լեզու մը : Խոր-
հիլը ներքին մեծախօսութիւն մը չէ՞ միթէ :
Ինչպէս չը կայ լեզու առանց խորհուրդի .
ստոյգ չէ՞ նաեւ , ինչ որ կը պնդեն ոմանք ,
թէ չը կայ խորհուրդ առանց լեզուի : Այն-
քան անբաժան են երկուքը , խորհուրդ եւ
լեզու , որ միեւնոյն բառը կը նշանակէ թէ՛
մին եւ թէ՛ միւսը : Բան կը նշանակէ թէ՛
միտք եւ թէ՛ խօսք : Որչափ ալ սերտ ըլլայ
այս տանջութիւնը , կրնա՞նք ժխտել տակա-
ւին թէ մարդս կը խօսի , այսինքն լեզու ունի ,
սրովհետեւ կը խորհի , այսինքն միտք մը
ունի . եւ ոչ թէ կը խորհի , սրովհետեւ կը
խօսի :

Հէլէնի տարօրինակ վիճակէն օգուտ քա-
ղել ուզած են մարդիկ հոգեբանական այս
խնդիրը լուսարանելու համար : Կ'երեւի թէ
Հէլէն միտք չունէր . գէթ բասին բովանդակ
իմաստով , ինքնաճանաչ միտք չունէր , երբ
դեռ լեզու չունէր : Մէկ բառ մը , ջուր բառը,
սորված վայրկեանէն է միայն որ սկսաւ իր
իմացականութիւնը . պիտակցաբար գործել :
Այդ թուականէն առաջ իր կեանքի մասին
գրեթէ ոչինչ կը յիշէ Հէլէն , մինչդեռ սրքան
չատ բաներ կը յիշենք մենք ամէնքս մեր
մանկութեան այդ կանուխ տարիներէն :
« Ի՞նչ միտքդ կուգայ , Հէլէն , քու մանկու-
թեան տարիներէդ , ի՞նչ խորհուրդներ ունէիր
Օր. Սիլվընէն դաս առնելէդ առաջ . » — « Ու-
չի՞նչ , ոչի՞նչ , կը պատասխանէ Հէլէն , միայն
սպաւորութիւններ , մթին , անորոշ սպաւո-
րութիւններ » : Հէլէն երբ մինակ է եւ խոր-
հելու գրադած , յաճախ արագաբար կը
չարժէ իր մասները բառեր հեգեղով . տե-
սակ մը մեծախօսութիւն : Տարակոյս չը կայ
որ ինքն ալ մեզ նման բառերու միջոցաւ է
որ կը խորհի :

Հարվըրաի ուսուցիչներէն մէկը , որ համ-
բերու լեզուն սորված էր , օգնեց Հէլէնի իր

քննութեանց մէջ : Հարցումները , որ տպա-
գրուած ու կնքուած կը յանձնուին աշակեր-
տաց , կարգաց Հէլէնի , այսինքն անոր ձեռ-
քին վրայ հեգեց . եւ Հէլէն իր գրերով օրի-
նակեց զանոնք : Պատասխանները սովորական
գրի մեքենայով գրեց . բայց իր գրածը ան-
շուշտ ինքը չէր կրնար կարգալ : Նոյն բարե-
սէր ուսուցիչը կարգաց իրեն , եւ Հէլէն ալ
իր հարկ սեպած սրբագրութիւնները թելա-
դրեց :

Դասարանին մէջ միշտ իր քովն է իր սի-
րական բարեկամն ու վարժուհին , Օր. Սիլ-
վըն , որ դաստառաց ճառախօսութիւններէն
կը հեգէ Հէլէնի ձեռքին վրայ այնքան արագ
որքան դասատուները կ'արտասանեն զայնս :
Եւ այսպէս իր կարեւորագոյն զգայարաննե-
րէն գրկուած Հէլէն՝ գրադած է այժմ աշ-
խարհի ամէնէն բարձր դաստիարակութիւնն
ստանալու . եւ իր անցելոյն մէջ ցոյց տուած
յաջողակութիւնը գրաւական մըն է թէ նոյն-
չափ պիտի յաջողի նաեւ իր ներկայ դժուա-
րին ձեռնարկին մէջ :

Հէլէնի վերջին գրութիւններէն չունիմ
քովս դժբաղդաբար . բայց ունիմ օրինակը
նամակի մը զոր գրած էր իր մէկ բարեկա-
մին , մէկ երկու տարի առաջ : Անգլիերէն է
այդ նամակը . եւ թերեւս Հէլէնի վրայ այն-
քան խօսելնէս վերջ շահեկանութենէ զուրկ
չպիտի ըլլայ այդ նամակը թարգմանել հոս ,
թէ եւ ներկայ գրութիւնս ալ չափազանց եր-
կարեցաւ արդէն :

« Տեսա՞ք Քիրլինկի Ճշմարիտ Տեսիլը կամ
« Քիչկըրի դպրոցը : Զօրաւոր քերթուած
« մըն է առաջինը . եւ ինձ ալ տեսիլներ տես-
« նել տալ սկսած է : Անշուշտ կարգացիք ինչ
« որ հրատարակուեցաւ Կօրտընի ի յիշատակ
« Քօլէճին մասին զոր Անգլիացիք մտադիր
« են հիմնել ի Խարթում : Մինչդեռ կը խոր-
« հէի այն բարիքներուն վրայ զորս տեղացի
« ժողովուրդք պիտի քաղեն այս քօլէճէն ,
« սրբախ մէջ ծագեցաւ հզօր փափաք մը որ
« մեր սիրեցեալ երկիրն ալ կարենար նմանօ-
« րինակ եղանակաւ մը « Մէյնի » քաջարի սրդ-
« լոց ահաւոր կորուստը վերածել այդպիսի
« լարիքի մը Բուզայի ժողովրդեան , Քօլէճ
« մը ի Հավանա չպիտի՞ ըլլար միթէ ազնուա-

«գոյն եւ ամէնէն տեւական յիշատակարանը՝ «զոր կարելի է կանգնել ի յարգանս Մէյնի «արիասիրտ զօրաց, ինչպէս նաեւ անսպաս «աղբիւր մը օրհնութեան : Երեւակայեցէ՛ք «մտնել Հավանայի նաւահանդիստը, երբ մատ- «նանիչ կրնեն ձեզ քարափը որուն մօտ խա- «րիսխ ձգած էր Մէյնը այն արհաւիրակից դի- «չերը ուր քանդուեցաւ խորհրդաւոր կերպով «մը եւ կ'ըսեն միանգամայն թէ այդ հսկայ, «չքեղ չէնքը, որ այդ տխուր վայրին վրայ կը «նայի, «Մէյնի ի յիշատակ քօղէճն» է, զոր «Ամերիկեան Ժողովուրդն է կանգնած, եւ «թէ՛ Բուպացոց եւ թէ՛ Սպանիացոց դաս- «տիարակութեան է նուիրուած : »

Հէլէնի վիճակակից Լուս Պոնիմէնի գրած քանի մը տողերն ալ ունիմ աչքի առջև : Կըր- նամ զանոնք եւս յաւելուլ հոս :

«Երկինքն է սուրբ տունը : Սուրբ տունն «է ի յաւիտենից ի յաւիտեանս : Գարնանա- «յին է սուրբ տունը : Այս մթին տունէն «կանցնիմ դէպի լուսաւոր տունը : Սուրբ «տունը պիտի տեւէ ցյաւիտեան : Չմտնա- «յին է աշխարհային տունը : Իժուարին է «մեզ, մեր մտքերուն կուրուսեան պատճա- «ռաւ, գնահատել փայլը սուրբ տան : Աս- «տուծոյ մատը պիտի բանայ իմ աչքերս ու «աւանջներս, պիտի լուծէ կապն իմ ընզուիս : «Քաղցրագոյն հրճուանքով պիտի լսեմ, խօ- «սիմ եւ տեսնեմ երկնից մէջ : »

Ինչ որ չափազանցօրէն եւ այլաբանօրէն կ'ըսուի երբեմն ուսանց համար, կրնայ աք- ոական ճշտութեամբ ըսուիլ Հէլէնի համար : Եղական անձ մըն է աշխարհիս մէջ Հէլէն Քէլըր :

ԱՔԲ. ՏԵՐ ՅԱԿՈՒԲԵԱՆ

Տիարպէֆրի առաջնորդական տեղապահ Տ. Եղեկիէլ վարդապետ չորեքշաբթի օրը Դաւթիայ Խորհրդարանը երթալով Խառն Ժողովին ներկայացաւ :

Բաղեթ առաջնորդ Տ. Եղիշէ վարդապետին հեռագրուեցաւ Պատրիարքարանէն թէ իր հրաժարականը անընդունելի դատուած է Ազգ. Վարչութեան կողմէ. բայց թէ կրնայ իրեն փոխանորդ մը կարգելով Պոլիս գալ, արձակուրդը անցընելու :

ԲԱՐԻ ԸՆՏԱՆԻՔ ՄԸ

Տեսած ես երբեք հարուստի մը տունը՝ ընդարձակ պարտէզի մը մէջ որ կանանչցած է արհեստական մարգագետիններով, կաղնի- ներով, եղելիններով, մակիօքեաներով եւ որ տեղ տեղ ճերմկեցած է զիցարանական խոր- հըրդաւոր արձաններով,—տուն մը հոյակապ, աւելի ճիշդը բսելու համար՝ ապարան մը ու- թուն սենեակներու յատակները օսմանեան եւ պարսկական թանկագին կապերտներով եւ գորգերով ծածկուած են եւ պատերը Ռան- պրանտի, Վանտիքի, Փէրօմի, Մէսօնիէյի նման հռչակաւոր պատկերհաններու վրձի- նով գծուած ընտանեկան, մայրական սիրոյ եւ ամուսնական անձնուիրութեան նշանարան ըլլալու արժանի նկարներով զարդարուած, տուն մը որ մտքութեամբ կը ծփայ եւ վա- յեղութեամբ կը փայլի, տուն մը որ կը պա- տապարէ բազմաթիւ ընտանիք մը որ 150 տարիներէ ի վեր կարողացած է անվթար պահել իր պատիւը եւ վարիւր ու շէ դադրած բարեկեցիկ ըլլալէ,—ընտանիք մը որուն հայ- րը, ալեւոր ծերունի մը, դէպի Աստուած, դէպի իր անձը եւ դէպի նմանները ունե- ցած պարտաւորութիւնները լիով իրատարիլէ գատ՝ կը մտածէ եւ կը յաջողի նոր գործեր հնարել, շէնքեր շինել մի՛ միայն աշխատա- սէր աղքատին գործ եւ հաց ճարելու համար, ընտանիք մը որուն մայրը ցարդ եօթանա- տուն տարեկան է եւ որ առաքինի եւ հա- մեստ կնոջ, ճշմարիտ մօր մը տիպարն է ու ընտանիքին ամէն հոգը ունենալէ գատ՝ ամ- բողջ իր թաղին աղքատ ընտանիքներուն նե- ցուկը եւ պաշտպանն է, հիւանդաց ալ պա- հապան հրեշտակը,—ընտանիք մը որուն անդ- բանիկը բազմահարուստ ըլլալով հանդերձ՝ աղքատի մը պէս կ'աշխատի օրն ի բուն դա- ւակաց եւ ժամանակակիցներուն աշխատու- թեան բարի եւ օգտաւէտ օրինակները ցոյց տալու եւ ուրիշներու աշխատութիւնը իր կա- րողութեան համեմատ վարձատրելու համար, ընտանիք մը որուն պատկանող օրիորդները թէեւ գեղանի, այլ պարզութեան, համես-

տութեան եւ պարկեշտութեան մէյակի տիւ պարներն են , ընտանիք մը որ դուռը բաց կը պահէ անօթին կշտացնելու , հիւանդը դարմանելու , օգնութեան արժանի աղքատին օգնելու , եւ դժբաղդին արցունքը սրբելու համար , ընտանիք մը որ երբեմն ալ խընջոյքներ եւ երեկոյթներ կ'ուտայ , իր բարեկամները պատշաճութեամբ հիւրասիրելու եւ մեծարելու համար եւ սրունք ընդհանրապէս ձմեռը տեղի կ'ունենան , բայց ջերմոցներով 18 աստիճան տաքցած սրահներու մէջ , եւ Օրօրթօյի , Կզէրէսի եւ Շամբանիայի գինիներ կը ջամբէ պարոններու եւ պտղաղակներ ու զովացուցիչ ըմպելիներ օրիորդներու եւ եւրիտասարդներու սրունք օրֆիսներով , ազադներով , գամէլիաներով , գոյնզգոյն վարդերով , քեպրօզներով զարդարուած լուսավառ սրահներու մէջ , ընկուզենիի տախտակներով շինուած փայլուն յատակին վրայ երաժշտութեան քրիսթալէ խաղերու (նօթա) ներդաշնակ քայերով կը պարեն իրբեւ ճշմարիտ յաջորդներ Թէրփաիքորի : Այս պերճութեան , ճոխութեան եւ ուրախութեան տունէն քիչ մը անգին յուսահատ կը սպասէ այրի թշուառ կինը որուն աչքերէն կաթած արցունքներն խոկ երեսին վրայ սառած՝ իր զըրկին մէջ իր տկար եւ անօթի մանուկը կը ջանայ տաքցընելու եւ սրուն կը սպառնայ անագորոյն մահը , այլ տանտիրոջ նորապի օրիորդը մտնալով պահ մը պարը , հաճոյքը , երիտասարդութեան հրապոյրը եւ երազը՝ փայլակի արագութեամբ կը վազէ կ'երթայ , այրի կինը եւ որքը առնելով տաքուկ սենեակ մը կը բերէ եւ հոն ազնուօրէն գանձնք կերակրելով եւ պատսպարելու չափ զգեստ , քիչ մըն ալ դրամ տալէ վերջը կը ճամբէ , ատոր փոխարէն մարդասիրական ազնուագոյն պարտաւորութիւնը կատարած ըլլալու վեհ գոհունակութիւնը զգալով .

Եւ ահա այս տունն է որ ընդ միշտ լի է անանկին օրհնենքով , տկարին անեղծ մաղթանքով եւ սրբին ժպիտներով :

Եւ երբ աշնանային զով տաւօտ մը՝ սոյն նահապետական տան մէջ գտնուիս ու աեսնես արեգական ճառագայթ մը որ մշտագալար ծառերու սողսղուն տերեւներուն մէջէն

գոյ եւ մօրը բոլորտի բը գուրգուրանքով բազմազ պարկեշտ տղոց եւ համեստ աղջկանց խարտեաչ մագերը շոյելով անցնի՝ կ'ըսես հարկաւ որ այդ ճառագայթը Աստուծոյ մէկ օրհնութիւնը եւ նախախնամութեան բարեհաճ մէկ նայուածքն է :

Եւ գիտե՞ս որ կա՛յ տակաւին այդպիսի տուն մը եւ ընտանիք մը :

Ես իրր ականատես վկայ՝ գիտեմ թէ կայ եւ գիտեմ նաեւ թէ այդ ազնիւ ընտանիքը իրր նշանարան ունի իրեն սա նուիրական խօսքը . «Մի՛ ըներ ուրիշին ինչ որ չես ուզեր քեզի ընեն , կամ ըրէ՛ ուրիշին ինչ որ կ'ուզես քեզի ընեն» :

ԳԷՈՐԳ ԳՈՒՊԼԻ

Ա Ղ Օ Թ Ք Ը

(Ն Ո Ր Ա Վ Է Պ)



Օրագրի տխուր էջ մըն է աս , ճանրադութեան բարեկամի մը՝ որուն հետ շոյտ մտերմացանք , եւ կը մղտխո՛ հրատարակութեան տալ առանց կէտ մը փոխելու :

« Բարեկամս ,

Ինչ որ կ'ուզես՝ գրել , պիտի չի կրնամ գրել քեզի . բայց դուն որ բան մը չես հասկընար՝ երբ չես ուզեր , այս անգամ անշուշտ պիտի հասկնաս թէ ի՛նչ ըսել կ'ուզեմ :

Ամբողջ երջանկութիւնս , որ կուլայ , եւ քու դժբաղդութիւնդ , որ կը խնդայ , հիւսիս չափ նշանակութիւն չունին ինձի համար : Որովհետեւ աղօթքը կայ » :

Զարուի

Քանիցս կարգացի այս նամակը , որ խունկ կը հոսէր , եւ բան մը չի հասկցայ արդարեւ : Ի՞նչ բտել կ'ուզէր . առեղծուած :

Տարիներէ ի վեր ընդհատուած պարզունակ թղթակցութիւն մը վերսկսելով , Զարուհի խոստովանութիւն մը ընել կը փորձուէր անշուշտ , եւ ատիկա շատ ուժով կուգար իրեն :

Բառ առ բառ կը վերլուծեմ, եւ խմտտ չեմ գտներ :

Ի՞նչ հիւանդագին տարտամութեամբ գրուած է ատիկա :

Գուցէ իս տենդոտեղու համար տեսակ մը եկերիկ :

Բայց վերջապէս հետաքրքրութիւնս յագենալու պէտք ունէր : Քսան տարուան բարեկամահիէ մը, որ մտերիմ մը, քոյր մը եղած էր ինծի, այսպիսի Փանթեզի մը չէր բացատրուէր վրդովուած մաքիս մէջ :

Իրենց տան մէկ մտերմին — որուն յաճախ հանդիպած եմ հոն — խոնոյն երկտող մը գրեցի եւ իրողութիւնը բացատրելով խնդրեցի որ Զարուհին մասին տեղեկութիւններ հաղորդէ ինծի :

* * *

Ահա՛ պատասխանը որ չուշացաւ դժբախտարար :

« Սիրելի՛ս ,

Ասանց յուզմունքի չէի կրնար կարդալ նամակդ , որուն մէջ ծայրահեղ միամտութիւն մը կար :

Զարուհին խելքին եկած է :

Չորս ամսէ ի վեր թաղուած է ան խորին լուսթեան մը մէջ զոր կցկուտը բաւեր միայն կը խզեն :

Աղօթքի մենամուտութենէն բռնուած է : Կ'աղթէ իր սենեակին մէջ օրն ի բուն :

Բժիշկները ապարդիւն ջանքեր կ'ընեն այդ նորաձեւ խթերիին դէմ :

Վերջերս երաժշտութեան ազդեցութիւնը փորձուեցաւ . շատ հեշտ տարւորութիւններ ներգործեցին իր վրայ : Հիմակ իր քոյրը քովի սենեակը յաճախ կը դաշնակահարէ :

Երբ զուարթ կտոր մըն է , Զարուհի կուլայ , ու , երբ ախար բան մըն է , անուշ ժպիտ մը՝ զուարթութեան գոյն ժպիտ մը կը ծլի իր վտիտ ու տժգոյն դէմքին վրայ . խաղաղութիւն մը կը ցոլայ հոն . կարծես կապաքինի խեղճը , կը վերագառնայ կեանքին : Ամէնուս յոյսը երաժշտութեան վրայ է . անիկա պիտի բժշկէ Զարուհին :

Տեսնես տարաբախտ աղջիկը որքա՞ն տգեղցաւ : Աչքերը , որոնք կախարդիչ էին , խոտջացան , մար կապեցին ու երբեմն սար-

տափելի ակնարկ մը դուրս կուգայ անոնցմէ , որպէս թէ մեռելի մը հոգին խոյս տար :

Աղօթատեղի մը յարգարած է . համա՛կ միադիքութիւն : Պատին վրայ ինչեղութիւն մը երենասի վրայ քանդակուած . քովը ջրաներկ մը՝ Աստուածածին Յիսուսը գրկած . եւ ասանց ներքեւ իւզանկար մը — աղջիկ մը որ կ'արտասուէ , գեղակերտ շերմի մը փարած սգաւոր :

Եւ յետոյ , քիչ մը անդին , մեկուսի , լուսանկար մը . . . :

Ձեռնամած երկիրպագութեան մը մէջ կ'անցնի իր տառապագին կեանքը . ջերմեւունդի աղօթք մը չի կարծես , այլ հիւանդի մը որ կը թուի աղօթել՝ դէպ ի յաւիտենակալութիւն՝ դեանաքար թոխչքի մը մուսյլ ու յուսահատ արտայայտութեամբ :

Ոչ մէկ բան կը խանգարէ իր աղօթքի կեցուածքը . միայն երբ յոգնի, ձեռքերը ծունկերուն վրայ կ'իյնան , եւ , գլուխը ծռած , թմրութեան մը մէջ՝ կ'երազէ չես գիտեր ինչ :

Ամէն անգամ որ , իբրեւ մտերիմ մը , պզտիկ փորձ մը ըրած եմ սթափեցնելու ինքը , գտած եմ ան նոյն դիրքին մէջ . կամ ծունգի վրայ նստած , տարտամութենէ խոնջ ցնորայած աշուրները այդ պատկերներուն յառած պիչ , եւ « Աստուած » ու « Խաչ » բաւերը հծծելով . եւ կամ յոգնութենէն թմրած , մրափի մը մէջ , կարծես զգայազրկ — որպէս թէ վերջալոյսի խորհրդանիշն ըլլար :

Ձեմ կրնար առաջ երթալ , ու գրիչս կը վարանի քիչ մը , բայց պէտք է որ ժողվեմ ուժերս յայտնելու համար քեզի բան մը որ անշուշտ բողբոջին նոր չէ քեզի , ըսելու մէկ խօսքով թէ Զարուհի սիրոյ զոհ մըն է , սիրոյ մը՝ զոր իր հպարտ եւ լուս ընաւորութիւնը անկարելիութեան մատնած է եւ որ իրեն համար արժած է ամբողջ կեանք մը , կոյս ծաղիկ կեանք մը :

Բառ մը եւս :

Վերը լուսանկարի մը վրայ կը խօսէի : Ի՛նչ , անիկա քուկդ է . . . »

* * *

Նամակը ցնցեց իս . երբեք հոգիս այսքան ուժգնուպէս ազդուած չէր :

Չզուտ ձեռքերով գրուած այդ հասցեագրողները մէջ մէկ ուրուական կ'ըլլային ու կը ցցուէին աչքերուս առջեւ :

Ամբողջ մարմինս կարծես հինգ րոպէի մէջ կը քակուէր հետզհետէ ու փռելու ցնորք մը կը պտտէր մէջս :

Չարուհին ջլախտաւոր , սիրոյ զո՛հ մը . եւ իմ լուսանկա՛րս :

Ո՛հ , ինձի համար այս ամէնը նոր յայտնութիւն մըն էր , նոր , բայց ահագնորէն խոր , սիրտս խոկոյն ճմլելու աստիճան անգութ եւ կարծր :

Կնոջս բան մը չըսի : Ան ինէ աւելի պիտի զգածուէր գուցէ . իր արդէն տկար ջիղերը թունդ պիտի ելլէին : Միայն ինձի կ'ուզէի պահել այս գաղտնիքը՝ իրրեւ խղճի խայթ մը :

Իշերը զօջմարներով անցուցի : Աչքս մութին մէջ դիւային պատկերներ միայն կը տեսնէր :

Չարուհին հարսի զգեստով տեսայ . յետոյ պատանք հագած . ու անգամ մը , ձեռքը խաչ մը բռնած , վրաս աղօթելու կուգար . եւ , քիչ մը վերջ , գիշերուան մէջ ինք ալ գիշեր մը , սեւեր հագած վերէն ի վար , պատգամի մը ահաւոր շեշտով , ինձի դէմ անուր անէծքներ կ'որոտար . դեռ շատ ձեւերու մէջ երեցաւ ինձի այդ ուրուականը . բայց էն վերջինը , արչալցոյսի հմայք մը բերաւ ահաբեկ սրտիս մէջ . մայրապետի մը փափկութեամբ սնարիս մօտեցաւ , եւ ներող ձայնով մը որ կը փաղաքէր — «թէ որ սիրէի՛ր» մրմնջեց ու անհետացաւ մութին սեւ ծալքերուն մէջէն :



Տղայութենէ ի վեր մէկտեղ մեծցած էինք : Խաղերու յաջորդած էր բարեկամութիւն մը որ շատ բնական գնահատումի եւ շատ ազնիւ գորովի մը կրթնած էր . կը հաւատայինք թէ պէտք չէր որ մեր այդ սուրբ զգացումը զոհուէր տարբեր թելադրութեանց . ու մեր անուշ մտերմութիւնը չի խանգարուեցաւ բնաւին :

Օ՛հ , հին նամակներու ծրարները կը խառնշտեմ : Գունատ թուղթեր , դեռ իրենց բուրմունքը պահած . մաշած գիրեր , որոնց հոգին չէ փախած . յիշատակի բոյր , յիշատակի թոյր : Անուշութիւն մը կը ծաղկի հոն :

հին երանելի օրերու քնքոշ պատմութիւններ , պզտիկ խոտտովանանքներ՝ յաճախ խաղափուկ : Եւ կարծես այդ վաւարթ անցեալը , հիմակ տիրած ու սգաւոր , կուլայ Չարուհիին վրայ որ կը տառապի :

Հէ՛ք աղջիկ : Ան աղօթքին մէջ գտաւ ամբարձը . չարչրիւած ուղեղին միւս զուտները փակելով ամէն բանի , եւ գոգցես հսկելով գերեզմանին վրայ ուր թաղեց իր բոլոր կըծերը , իր բոլոր յոյսերը :

Բայց իմ սրտիս մէջ կը բացուի անանկ վէրք մը որ միշտ պիտի կոտտայ ու երբեք պիտի չի գոցուի .

Հիմակ , ո՛հ , շատ ուշ , կը տարրալուծեմ բոլոր իրողութիւնները : Ամէն բան , ինչ որ անցած է մեր երկուքին մէջ , խաչոր համեմատութիւններ կ'առնէ երեւակայութեանս մէջ : Հեռուէն , տարիներ անցնելէն վերջ միայն , կը սթափուիմ ու կ'ամբիտուիմ :

Չարուհի կը սիրէ՛ր իս :

Եթէ կեղծ չէր իր անձնուէր բարեկամի պարզունակ մտերմութիւնը , գէթ ասոր մէջէն ծլած ուռճացած էր սիրոյ զգացումը՝ զոր կեղծելու , զսպելու , ջախջախելու համար անկարելի պայքար մը մշած է իր գոլոր հոգիին դէմ որ չէր կարող տոկալ :

Ինք , իրրեւ զարգացումի եւ քարաքթերի տէր աղջիկ , այնքան նուրբ որքան խրոխտ , կը քնացնէր երկար ժամանակ իր սէրը , կը խարէր իր հոգին , ու կը ճգնէր զերծ ու անկախ պահել մեր բարեկամութիւնը — ուրիշ եւ որուն չնորհիւ սիրտս գրաւելուն մէջ իրեն համար պարտութիւն մը , անկու՛մ մը կը տեսնէր միայն :

Բայց կը սպասէր թերեւս , ի՛նչ տանջող միամիտ ակնկալութիւն , որ ինքս իսկ առնէի առաջին քայլը ու բանայի իրեն սիրտս իր մերկութեան մէջ : Այդպէս ըլլալու էր . քանի մը անշան միջադէպներ կ'ուժոճուցնեն եմթադրութիւնս :

Բոս մը մանուշանդ , զոր յատուան արտասանեց օր մը , երբ մինակ էինք ու լուս , բոս մը որ գամի մը պէս միտեր է մինչեւ սրտիս խորը եւ դեռ հոն կը մնայ ,

- Չար

Եւ ասիկա իր բոլոր խոտտովանանքը եղաւ :

Բայց, աւս'ը, Զարուհին համար ունեցած սէրս տարբեր էր բոլորովին: Ան ինծի համար կին մը չէր:

Եւ այս բմբուռումս իմ բոլոր յանցանքս է: Այս պայմաններուն մէջ է որ, ամուսնութենէս քանի մը ամիս վերջ, իմ պատճառովս, ինծի համար, Զարուհին, աւելի յասակաւոր, հիւանդ ու խելաւս միտաբլթեան մը մէջ թաղուեր է՝ կորսնցնելով իսպառ իր շքնաղ յատկութիւնները, համակ ջիղ դառնալով, գուցէ մահուան աւելի մօտիկցած ըլլալուն գիտակցութեանը մէջ լսի կենդանի:

* * *

Յաճախ կը գրէին ինծի Զարուհին վիճակին վրայօք, որ հեռագհետէ կը վատթարանար:

Դաշնակը աւելի դէշ ազդած էր իրեն վերջերս եւ խորին լուսթեան մէջ կը ցանկար ապրիլ:

Շատ նիհարցեր էր. բժիշկները իսկ մտահոգ էին իր կեանքին համար: Անվերջանալի աղօթքներէն աւելի — եթէ աղօթք կրնայ կոչուիլ իր անպգայութեան մէջ մեքենայաբար կատարուած աղօթքի նմանութիւնը — իր մտասեւեռումը կը կործանէր քայքայուած էութիւնը:

Վերջին յոյս մը կ'օրօրէ իր խեղճ ծնողքը, կը գրէր ինծի բարեկամս, ան ալ դուն ես. թերեւս քու տեսչդ այնքան սաստիկօրէն ազդէ դորդէ որ Զարուհին շատ խորունկ քունէ սթափածի պէս վերածնի յանկարծ ու ժպտի կեանքին — որ ամէն օր մէյ մէկ քիչ խոյս կուտայ իրմէ:

Խելքիս մօտ երեւցաւ աս. ու չի վարանեցայ՝ կնոջս ստիպողական գործ մը պատրուակելով՝ պայուսակս կապելու եւ մեկնելու:

. . . Երբոր իր սենեակին սեմին վրայ գրի ոտքս, կամացուկ մը, դողահար, երեւոյթի մը յեղակարծ ազատութիւնը ձգելու համար իր վրայ, Զարուհի, ծնրադիր, սեւ խոյեւ լութեան յառած իր մեծած աչքերը, ձեռնած մած ու խանդավառ, կ'աղօթէր:

Ոտնաձայն մը գլուխը թեթեօրէն ինծի դարձուց. անճանաչ էր. նուազում մը դգացի. ու, շուարած, դող ելած, հազիւ ինքզինքս բռնելով՝ կրցի փոփոսլ:

— Զարուհի՛ . . . :

Անայլայլ, նոյն այն գիրքին մէջ, հեարզհետէ գլուխն ինծի դարձնելով, եւ պիչ պիչ աչքերուս մէջ նայելով նայուածքով մը որ գերեզմանին անդիէն կուգար կարծես, դէպի ինծի ձեռնամած մնաց անչարժ, որպէս թէ շարունակէր աղօթքը . . . :

Հէք քոյրը, որ կ'անակս էր, թեւէս դուրս քաշեց՝ երկուքնուս յուզմունքը չերկարելու համար անշուշտ:

Սանդուղին մօտ լսեցի դիւային փոփոսլքի մը պէս որ կը մուտար՝

— Ատո՛ւււած, խա՛ջ: Խաչը ինծի, Ատուած քեզի . . . :

. . . Արցունքով մտայ այս տունէն ներս, եւ արցունքով մեկնեցայ:

* * *

Եւրօպա վերադառնալէս շարաթ մը վերջ իմացուցին ինծի Զարուհին մահը . . . :

ՎԱՀՍՆ ՄԱԼԷՁԵԱՆ

Բ Ե Ր Ն Ի Խ Ն Ա Մ Ք

ԼԻՆՏ ԵՒ ՎԵՐԱՏՆԿՈՒԹԻՒՆ

Կը պատահի երբեմն որ մեզի դիմողներէն տմանք կը գանգատին թէ ա՛լ չեն կրնար իրենց ակաւաները խոզանեղ (brosser), որովհետեւ լինտերը՝ ամենէն թեթեւ հարման՝ կը սկսին արիւնիլ, կը կարմրին, կ'ուռին եւ քիչ շատ կ'այանուն:

Այդ ահա լինտերու բորբոքում կը նշանակէ:

Այս ընտատապի (gencivite) պատճառները պէսպէս են, բայց կարելի է զսննք երկու դասի վերածել. Ա. Անոնք որ տեղական պատճառ մ'ունին: Բ. Անոնք որ կազմակերպութեան օխտարանական վիճակէ մը կախում ունին, այսինքն ուրիշ ընդհանուր հիւանդութեանց հետեւանք են:

Ատոմնային երբէն՝ ատոմնայրուցէն առաջ եկած ընդատապերը, ծխողներուն ընդա-

տապը՝ որ ածխի մասնիկանց լինտերուն վրայ կուտակուելէն կը ծագի, ինչպէս ստալին անգամ՝ ըլլալով ստորագրեց Մամիլիո, աստ մանց ընտին վրայ մանին դիզուելէն ծնունդ առնող ընդատապերը եւ ըն. եւ ըն., առաջին դասուն կը պատկանին :

Զանոնք խնամելու է՝ անոնց ծնունդ տուող պատճառին դէմ մրցելով — ծխելը դադարեցնելով, մանը արմատաքի խլելով, վերջապէս ջանալով զոնազան խաղաղներու (collutoire) միջոցաւ թաղանթին վիճակը բարեփոխելու : Կալիի քլորատով խաղաղները եւ քրոմական թթուաով (acide chromique) լինալը ծեփելը շատ ազդեցիկ են :

Բայ ասկէ՝ ինչպէս քիչ մը վերեւ ըսինք, ընդհանուր հիւանդութիւնները մեծ դեր մը կը խաղան բերնի թաղանթին վերքերը գոյացնելու մասին, թէ՛ երբ անոնց ներգործութիւնն առժամեայ է՝ ինչպէս սուր հիւանդութեանց մէջ, զորօրինակ եռացուցիչ տենդը, փանտատենդային ջերմը, հարսանիթը, պիսակը (variole), որոնց երբեմն իրբեւ կնճիւղ կը յաջորդէ բերնի քաղցկեղը (noma). — Թէ քանի մը թունաւորմանց մէջ՝ ինչպէս են սնդիկի, կապարի եւ լուսածնի թթուակով կամ ազերով թունաւորումը, որ կրնան սուր կամ տեւական ըլլալ եւ կազմական կոչուած հիւանդութեանց շարքը, խառնուածք, արտփց արամուդրութիւնք. եւ այլն :

Զորօրինակ միզարձակութեան մէջ յաճախ ընդատապը սկզբնաւորութեան արտանշաններէն մէկն է, եւ կը պատահի որ ծածուկ մնացած միզարձակութիւնը՝ արթուն ատամնարտժ մը երեւան կը հանէ ընտերու մէկ ցաւը հեռապատելու ասթիւ :

Ողնաթեքութեան (Rachitisme) ալ ազդեցութիւնն անհերքելի է ընդատամնային մասերուն հիւսուածքին վրայ, եւ հոն զանազան վնասներ յառաջ կը բերէ, ինչպէս՝ ակոսյի վարտուղութիւնները, քիւսց կամարին աճեւնալը, եւ այլն : Նմանապէս ոսկրաթուրութեան (ostémalacie) մէջ երեւան կուգան ընտերու խանգարումներ եւ ատամնակապճի շարուտային հոսանքներ. թողունք սիֆիլիսի իր վսնազան շրջաններուն մէջ՝ ընտերու վրայ գործած ազդեցութիւնը :

Պայարախաղ՝ (tuberculose) որ քիչ ներգործութիւն կը թուի ունենալ բուն իսկ ատամնայ վրայ, երբեմն բերնի թաղանթին եւ ծածուկեաց ոսկեր վրայ կեղումներ յառաջ կը բերէ :

Շարժական տարակարգութիւնը (ataxie locomotrice) սակայ ակոսաներուն ցնցումը եւ անկուսը կը պատճառէ :

Գիտենք որ արտարանական տանջութիւններ կան տեսական կազմածին եւ ատամնային դրութեան մէջ : Ուրեմն հարկ է ուշադիր քննութիւն մ'ընել յայտնի պատճառ չունեցող աչքի հիւանդութեանց շատին մէջ :

Անջրպետային եղջերիկ բորբոքումը (Xé. ratite) լուսները, ցանցակերպին զայրուցը (réinité) սովորաբար իրենց հետ կը բերեն ատամնային այլայլումներ. եւ բաց ասկէ՝ ատամնային խանգարումը կրնան անդրադարձ երեւոյթներ գոյացնել :

1886ին է որ Տոքա. Իւնկիր, Սան-Ֆրանսիսքոյէն՝ մտցուց ատամնային ներատնկութեան գործողութիւնը ատամնարտժութեան գործնական ստպարէզին մէջ : Ինչպէս ամէն նորութիւն, աս ալ ի՛սկզբան շարաշար պատարակուեցաւ իրբեւ ստիպիլի եւ վնասակար գործողութիւն մը : Այդ հետուոր ժամանակէն ի վեր գաղափարները փոխուեցան եւ կարծեմ թէ կրնամ հաւաստել որ անզգայացուցիչ հակափտական միջոցներու շնորհիւ զոր այժմ առ ձեռն ունինք՝ ներատնկութիւնն ընթացիկ գործառնութեանց կարգը դասուած է :

Այս գործողութիւնը կը կայանայ ակոսայ մը մտցնելու արուեստական ատամնակապճի մը մէջ որ ծածուկեաց վրայ կը փորուի : Այդ գործը ոչ ցաւ ոչ ո՛ր եւ է վտանգ կը ներկայացնէ հիւանդին : Ես նախամեծար կը համարիմ՝ հետեւելով Տ. Անօէտո զաստատուի վարգապետութեան՝ կիրը հանուած ակոսներ գործածել որ երկայն ատեն կրնան պահուիլ եթէ հարկ եղած զգուշութեամբ պատրաստուին :

Ակոսան ազուցմամբ (enkystement) երկու երեք շաբաթէն կը տեղաւորուի Գալով անոր գեղեցիկագիտական արդեանց եւ բնախօսական դերին վրայ՝ ահա Տոքա. Օդդորիւճին կարծիքը :

«Ոչ մէկ ատամնային գործողութիւն մը այնչափ կը մօտենայ բնութեան որչափ ակուայի մը ներատնկութիւնը, եւ եթէ եւքը յաջող ըլլայ՝ ատամնաբուժական սահմանին մէջ գտնուող ոչ մէկ գործողութիւն անկէ գերազանց է :»

Ինչպէս յայտնի կը տեսնէք, ասով կը ջընջուին կեղծ ատամնաշարք՝ երբ խնդիրը մէկ կամ երկու ակուայի վրայ ըլլայ, եւ կեռերը (croches) որ մերձակայ ակուաները կ'ապականեն, առանց հաշուի առնելու բազմաթիւ անձանց դէպքերը որ սխալ շարժմամբ մը իրենց շինծու ակուան կրկնած են : Տօքտ. Քրէտլի Մանտօ Մատրիացի բժիշկը ատաներեք դէպքեր կը նշանակէ կեղծ ատամնաշարի կտորներու որ իր օտարասի մարմին որկորին մէջ գտնուած են :

ՏՈՔԹ. ԼԵՒՈՆ Թ. ԹԷՐՁԵԱՆ
Ատամնաբոյժ

ՎՍԵՄ. ՅՈՒԱՏ ՊԷՅ. — Ինչպէս ծանուցուեցաւ երեքշաբթի օրուան Պաշտօնականներուն մէջ, Ներքին Գործոց նախարարութեան խորհրդական անուանուած է նոյն նախարարութեան Մէքթուպճի Վսեմ. Ֆուատ պէյ, ի վարձ իր բարւոք ծառայութեանց : Վսեմ. Ֆուատ պէյ՝ Բ. Դրան է'ն կարող պաշտօնատարներէն մէկն է, եւ իր կարող գրչով, հմտութեամբ եւ արժանեօք գնահատուած : Կը շնորհաւորենք Ն. Վսեմութիւնը Կայսերական այս նոր շնորհին արժանանալուն համար, որով կը բարձրանայ Ներքին Գործոց նախարարութեան խորհրդականի կարեւոր պաշտօնին :

ՍԵՐՈՅ ՊԱՐԱՊԷ

Մուք գիշերուան մեջ, լուռ, խորհրդաւոր,
Երբ երկիւնքն ըլլայ ամպոս, անլուսին,
Ու չորադին պատէ մութին վախը սին,
Այդ խաւարն ինձի բընաւ չազդեր դող :

Երբ ովկեանին անյասակ, անբաւ
Խորութեանցը մեջ սիրող մութն հսկայ
Կ'երեւակայեմ անհո՛ւն, մտտակայ.
Այդ ալ իմ հոգւոյս վախ չազդեր բընաւ :

Երբ մահին իյնամ հիւանդ, ցաւագար,
Ու խո՛նջ, պարտասաճ աչկերուս վըրայ
Դըժբնդակ մահուան մութը ծանրանայ,
Ադիկ ալ դարձեալ երկիւղ չեմ ըզգար :

Բայց քո՛ղ չը տեսնեմ ես այն անըզգամ
Մութն որ կը պատէ բովանդակ հոգին,
Երբ սիրոյ պարապը սիրէ արտին.
Ո՛հ, այդ խաւարէն միայն կը սուկամ :

Վ.Ս.Բ.Գ.Է.Ս

ԹՈՂՈՒՆՆԵՐՈՒ ԱԾԽԱՐՅԷՆ



Բ

Երբեմն կը պատահի որ թոշուներն նմանցնելու հարողութիւնը մասնակի կ'ըլլայ . այսինքն երգերու հատակոտորները միայն կը յլէ եւ իրեն առանձնայատուկ երգին հետ կը խառնէ : Այս կարգէն է իտալական անծեղը : « Թոխքը շատ թեթեւ է , կ'ըսէ Նոման , Գիշահաւին պէս օդը կը ճեղքէ առանց թեւերը շարժելու : Կ'երգէ ֆվեաֆ — ֆվիեղ — ֆվիեղ : Կ'ըսուի թէ այս թոշուներն ուրիշներուն երգը ունեւու եւ անթերօրէն կրկնելու հրաշալի յատկութիւնով օժտուած է : Կանաչահաւին , ճնճղուկին , ծիծեռնակին երգերը կը նմանցնէ , բայց այդ բոլոր եղանակներն իրարու հետ կը շիտթէ եւ ամբողջութենէն սիրուն երգ մը կը շինէ , կը գեղգեղէ : Երբեք իմացուած չէ որ ուրիշ թոշուներ մը երգը կրկնէ ամբողջովն : Անոյը երգ մը կը սխի , բայց միշտ ուրիշ երգով մը կը վերջացնէ : Տեսակ մը անծեղ ալ կայ , որ ուրիշ թոշուներու երգերէն ամբողջ պարբերութիւններ կը խառնէ իր երգին հետ : Երբ լաւ երգող թոշուներու մէջ չգտնուի : Ճայնը շատ անխորթ կը դառնայ : Բայց միշտ նոր եռանդով մը կը կրկնէ լաւ երգերը : Դժբախտաբար , ատեն ատեն աններգաշնակ Ճայներ ալ կը խառնէ » : — « Այդ անծեղէն հատ մը ունէի , կ'ըսէ կոմս Կուրէյ : Կատարելագէտ կը նմանցնէր ստիակին , արտայտին , ծիծեռնակին , Ֆլորեանային երգերը » : Նմանցնելու յատկութիւն ունեցող թոշուներուն մէջ պէտք է յիշել նաեւ խուրահաւը : Երգը շատ հեշտալուր է , նմանցնելու այնպիսի տաղանդ մը ունի որ կրնայ ըստ կամս փոխել Ճայնը , մերթ սուր ճիշ մը արձակելով եւ մերթ ներդաշնակ երգ մը գեղգեղելով : Նախ կ'ընդօրինակէ սարեակին քաղքաւք երգը , յետոյ տորդիկին , լրամարգիին , երաշտահաւին , կանաչահաւին , արտայտին , խայտիտին , ճնճղուկին , Ճայնի երգերը , իւրաքանչիւրին պատշաճ Ճայնելեւէջ մը տալով : Ի վերջոյ քնացող մարդու մը պէս կը խորդայ եւ տարօրինակ

Ճայներ կը հանէ : Շատ թոշուներ կատարեալ ճշտութեամբ կը նմանցնեն մարդկային Ճայնը : Այս տեսակէտով ամենէն ճարտարներն են թութակներն ու պապկաները . — բայց ոչ ամէնքը , այլ քանի մը տեսակները միայն : Աստուք կը յաջողին կրկնել ամէն բան եւ նոյն իսկ — մինչեւ աստիճան մը — հասկնալ անոնց նշանակութիւնը կամ ի գէպ ժամու գործածել գիտնալ : Ժաքօ բուսած թութակը ճարտար խօսող մըն է : Պրէմ կը պատմէ պատմութիւնն անոնցմէ մէկին որ իր խօսելու ճարտարութեանը համար 1000 Փրքի ծախուեցաւ : « Ժաքօն , կ'ըսէ , ուշադիր էր ամէն բանի : Ըստ պատշաճի կը պատասխանէր հարցումներու , կը հնազանդէր հրամաններու եւ կ'ողջունէր եկաղները կամ գացողները : Ուտելիք կ'ուզէր երբ անօթեմար եւ վերջապէս , ճիշտ մարդու պէս կը խօսէր , կ'երգէր , կը սուլէր : Ահա՛ իր արտասանած խօսքերը . — « Տէր երէց , կ'աղաչեմ , նուշ մը . — Մառայ եմ , Տիկին » : Եթէ դուռը զարնուէր , մարդու պէս բարձրաձայն կը պոռար . « — Մտէ՛ք , ծառայ եմ . — Պատիւ ունիմ՝ ձեզ ողջունելու » :

Երբ բան մը կտորէր կամ թափէր , կը պոռար . « Մի՛ ձեծէք զիս , Ի՞նչ ըրի , ի՞նչ ըրի » : Երբ « կրա՛կ ըսէին , կը պոռար . — Բա՛ւ՛մ , Երբ սեղանին շտկուիլը տեսնէր , կը պոռար . « Ծաշի հրամանեցէք » : Երբ զիշերն անցընէր իր տիրոջը սենեակը , ըւռ կը մնար , որչափ ատեն որ պտակած ըլլար ան , Բայց երբ ուրիշ սենեակ մը գտնուէր , արշալոյսը ծագելուն պէս կ'երգէր , կը սուլէր , կը խօսէր : Ժաքային աէրը կաքաւ մը ունէր որ երբ առաջին անգամ երգեց , թութակն անոր դառնալով ըսաւ . « — Պապի՛ , պզտի՛կ , պապի՛ » : Ժաքային աէրը 1853ին մեռաւ եւ թութակը զգացած վիշտէն հիւանդ ինկաւ : 1854ին , պարտաւորուեցան պզտիկ անկաղնի մը վրայ դնել եւ դուրգուրանքով դարմանել զայն : Տակաւին կը խօսէր եւ տխուր Ճայնով մը կը կրկնէր յաճախ . « — Ժաքօն հիւանդ է , հիւանդ է , խեղճ Ժաքօն » : Եւ մեռաւ :

Կին մը նոյն հեղինակին պատմած է ուրիշ ո՛չ նուազ ճարտար թութակի մը պատմութիւնը : « Այս թութակը մեզի տուող անձը

երկար ատեն արեւելեան Հնդկաստան ապրած էր : Կը խօսէր , բայց հղանոներէն լեզուով : Սովրեցաւ նաեւ գերմաներէն ու ֆրանսերէն : Այս երեք լեզուները կը խօսէր թուրքերէն շատ յստակ : Ուշադիր էր եւ յաճախ կ'ընէր այնպիսի խօսքեր զորս իրեն սովրեցուցած չէինք : Հղանոներէն լեզուով ամբողջ պարբերութիւններ կ'արտասանէր եւ գերմաներէն խօսքի մը մէջ երբեմն հղանոներէն բառ կը խառնէր , երբ այդ բառին գերմաներէնը չէր գիտեր կամ չէր յիշեր : Կը հարցնէր , կը պատահասէր , շորհակալ կ'ըլլար : Վերջապէս կը խօսէր տեղւոյն , ժամանակին եւ մարդուն համեմատ : Ետտ կը սիրէր իր տիրուհին : Երբ անկաւ ուտելիք տար , կտուցը ձեռքին կը դպցնէր իբր թէ համարելու համար » : Երբ տիրուհին մեռաւ , խեղճ թոշունը տիրութեան մէջ թաղուեցաւ : Մեծ դժուարութեամբ սնունդ կուտային : Յաճախ տիրուհին միտքը կ'իյնար ու կը պտտար . — « Ո՛ր է տիւ կինը » : Տան բարեկամներէն մէկը , Ռոթ , երկար ատենէ ի վեր տուն եկած չէր : Անոր վրայ կը խօսէին եւ կ'ըսէին թէ քիչ ատենէն պիտի գայ : Յանկարծ թութակը պտտայ . — « Ռոթը կուգայ կոր » : Պատուհանէն տեսած ու ճանչցած էր :

Վերջացնելէ առաջ ըսնք թէ թոշուններէն ոմանք երգած ատեննին անշարժ կը մնան , իսկ ուրիշներ պոչերնին կամ թեւերնին կը շարժեն : Կան ալ որ միայն թում ատեննին կ'երգեն : Քանի մը տեսակ թոշուններ , իրենց երգերուն , մանաւանդ սիրային երգերուն կը միացնեն այլանդակ շարժումներ :

Գ. ՄԱԼԽԱՍԻ Գրախօսական յօդուածին վերջին մասին մէջ սպագրական հետեւեալ վրիպակները սպորդած են .

« Վերջէն խնդացողը » . — 500 էջ , 240 տող (էջ 412) — Bien que . — « աւելի կը պարունակէ Պ. Նուպարեանէ (էջ 413) . — գեր (էջ 414) . — ենդաթրաթիւն (էջ 415) .

Ռոտնք ուղղելի են սապէս .

Վերջին խնդացողը . — 600 էջ . — Rien que . — աւելի կը պարունակէ Պ. Նուպարեանին . — գեր . — ենքադրութիւն :

Ողբացեալ եղբոր՝ Ալիքսան Արիիարեանի յիշատակին նուիրած տողերս թերի չի ձգելու համար . կը փութամ այս անգամ ալ հրատարակային շորհակալութիւնս յայտնել Հոյս շարձաթիւթի Տնօրէն-Սմբագիր Վահան էֆ. Փափագեանի որ այնքան զգայուն շեշտերով ցաւակցական ու համակրական յօդուած մը նուիրած էր հանգուցեղայն : Ենթահակալութիւն նայնպէս Փռնը լրագրին յարգելի Արտօնատիրոջը ինչպէս նաեւ Աւեսարեւի Պատ. Սմբագրութեան՝ իրենց բարեացակամ յիշատակութիւններուն համար :

S. A.

ՏԻԿԻՆ ՄԱՐԻԱՄ ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ, մայր Խաչիկ էֆ.ի եւ հանգուցեալ Ալիքսան էֆ. Խօրատանճեանի , որ իր մահկանացուն կնքեց երեքշաբթի իրիկուն , բարեպաշտ եւ առաքինի կին մըն էր որ ծերութեան մէջ կը փակէ իր աչքերը՝ ազգին եւ հանրութեան օգտակար անգամներ հասուցած ըլլալու գոհունակութեամբ : Յուզարկաւորութեան հանգէսը կատարուեցաւ չորեքշաբթի օրը . Պէշիկաշի եկեղեցիին մէջ , նախագահութեամբ Տ. Գրիգորիս արքեպիսկ. Յովհաննէսեանի եւ յուզարկաւորներու ստուար բազմութեան մը ներկայութեամբ որոնց մէջ կը նշմարուէին ասեւտրական ու սեղանաւորական դասի ներկայացուցիչներ եւ ծանօթ ազգայիններ : Դամբանականը խօսեցաւ Տ. Բարբէն վարդապետ , գրուանելով հանգուցեալ Տիկինձ բարեմամբութիւնները :

Խաչիկ էֆ. Խօրատանճեան եւ իր եղբորորդիները եկեղեցւոյ բակին մէջ ընդունեցին ներկաներուն ցաւակցութիւնները , որմէ ետք հանգուցեղայն մարմինը Շիլի փոխադրուելով՝ ամփոփուեցաւ ընտանեկան դամբանին մէջ . Յուզարկաւորներուն մեծագոյն մասը կատարելով հետեւեցաւ մեռելակիր կառքին մինչեւ գերեզմանատուն : Հանգուցեալ Տիկինձ յիշատակին՝ փոխան ծագիկեպատ կի՝ դրամական նուիրատուութիւններ եղան Ազգ. Հիւանդանոցի :

Մեր ցաւակցութիւնները կը յայտնենք Ալիքսան էֆ. Խօրատանճեանի որ որքան իր ասեւտրական գիրքովը նոյնքան եւ իր բարեգործութիւններովը յարգուած անձնաւորութիւն մըն է եւ ընդհանուր համակրանք կը վայելէ :

Արժօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
Տպագրութիւն Ե. ՄԱՏԹԻՈՍԵԱՆ
Կ. Պոլիս, Յինճանճըրը եօգուշու , Թիւ 27

Ա Ր Ի Ս Ե Ի ԸՆԿ

ՇՈՒԿԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՃԱՌԻ



Վաճառանիչ

Հիմնեալ 1889 ին

Կ. ՊՈԼԻՍ
ԹԱՀՏԱՔԱԼԷ



Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ եւ առաջնակարգ մեքենաներով օժտեալ եւ եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենանորը հոտեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուսալի պարզ օճառներ :
Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու սպարանաց դէմ մրցելու առաւելութեան կը միացնէ գիներու գերազանց ամանութիւնը :
Փախաքողներուն՝ քաթալօղը ձրի կը զրկուի :
Մեծ քանակ քնու՛մ բնել ուզողները կրնան դիմել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՕՍՏԻ ՊԱՔԵՒ Կ. ԻՆՃԻՃԻԵԱՆ ՈՐԴԻՖ վաճառատունները , իսկ գաւառներու եւ օտար երկիրներու մէջ դիմել գործակալութեանց որ ի ստորեւ , ուր պիտի գտնեն նմոյշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր անցեկութիւններով :

- ԲԱՐԻՋ.—ՊՊ. Լաքառիեռ. Որդի եւ Ընկ. 28 Ռիւ Շարոտեօն.
- ՊՈՄՊԱՑ.—ՊՊ. Ապքար եւ Ընկ.
- ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ.—Պ. Մ. Գալփանեան .
- ԳԱՀԻՐԷ.—Պ. Հ. Ռոզանբալ .
- ՌՈՒՍՃՈՒԳ.—Պ. Պ. Կ. Ինճիճեան որդիք .
- ՎԱՌՆԱ.—Պ. Կեռոն Արտիթի .

- ՉՄԻՌՆԻԱ.—Պ. Հայերիս Վառեիկ .
- ՍԵՂԱՆԻԿ.—Պ. Տիւօ Ֆերնանտէզ .
- ԻՒՍԿԻՊ.—Պ. Մ. Գալուանօ .
- ՊԷՅՐՈՒԹ.—Պ. Ֆրանքել Շիֆֆներ .
- ՍԱՄՍՈՆ.—Պ. Պ. Պետրոսեան եղբարք .
- ՏՐԱՊԻՋՈՆ.—Պ Արիս Կ. Ինճիճեան .

Կ
Ի
Պ
Ա
Շ

Կ
Ա
Պ
Ի
Շ

Հ Ա Ս Տ Ա Տ Ե Ա Ը 1884ԻՆ ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՇԱՊԻԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐ ԱՐԴՈՒՋԱՐԴԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ Մ. ՏԷՐ-ԴԱԻԻԹԵԱՆ

Թիւ 85 — Կալաթա , Վոյվոսա փողոց — Թիւ 85

Խիստ խնամով ու տարապայման աժան գիներով չափու վրայ կը պատրաստուին ամէն տեսակ շապիկ , օձիք , թեւնոց , գիշերազգեստ ու ներքին ձերմակեղէններ :
Միայն Ֆրանսական ու Անգլիական ընտիր տեսակ կերպասներու զանազանութեամբ օժտուած սոյն գործարանը տրամադիր է ընդունիլ ու կատարելալ հոգածութեամբ պատրաստել հարսանեաց ձերմակեղէններու յանձնարարութիւններ :
Կը ծախուին վերջին նորաձեւութեամբ խիստ ճաշակաւոր ու միշտ աժան գիներով օձիք , թեւնոց , ֆլանէլ , գուլպայ , թաշկինակ , սակեզօժ կոճակներ , փողկապ , զրամպնակ , զմէլի «Չէֆրա» , խողանակ , սանտր ու անուշահոտութեանց լաւագոյն տեսակներ :
Մ. ՏԷՐ-ԴԱԻԻԹԵԱՆ վաճառատունը նորաձեւութեան , սպարանաց ազնուութեան , յանձնարարութեանց խնամով պատրաստութեան , ու գիներու աժանութեան տեսակէտով վստահելի ու լաւ յանձնարարելի լաւագոյն տուններէն մէկն է :

ԳԻՆԵՐԸ ՈՐՈՇԵԱԼ ԵՆ

ԻՐԱԻԱԳԷՏ ՓԱՍՏԱԲԱՆ ՍՈՒՐԻՆՆԵԱՆ Ա. Ա. ԷՖԷՆՏԻ 15 տարիէ
ի վեր Պոլսոյ կողմը իր հաստատած գրասենեակը այս անգամ փոխադրած է Կալաթա,
Խավթար Խանի կից Ալէքսիատի Խանը, գետնայարկ թիւ 4, ուր կը գտնուի բաց ի կիրակիէ
ամէն օր մինչեւ կէս օր :

Կը ստանձնէ դատեր քաղաքային, առեւտրական եւ Շէրիի դատարանաց յատուկ :
Օսմաներէն, Ֆրանսերէն եւ Հայերէն լեզուով կը խմբագրէ ու կը թարգմանէ օրի-
նական ամէն տեսակ գրութիւններ :

Խորհրդակցութեանց գինը չափաւոր է :

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ

ԱՊՍՏՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻՒՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք	240,000,000 Քր.
1899ին գանձուած ապահովագրին	19,500,000 »
Գրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ գրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՑ ՃԻՒՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք	99,000,000 Քր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Գրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ
«Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը **ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ
ԿԱՐԵԼԻ ՉԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ՔՈՎ :**

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով : Նպաստաւոր պայ-
մաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան
պայմանները : Շահարածիներու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի
ապահովագրուողք **ՉԵՐԾ** են այն վնասներէն եւ յուսախաբուրքիւններէն, որոնց կ'են-
թարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des
bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ գրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահով-
գրուին :

Ընկերութեան գրամատունն է **ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ**

Թուրքիոյ եւ Արեւելքի Տեօրեկնութիւն

Կ. Պոլիս, Կալաթա, Թահնապուրուն խան, Օսմ. Պանֆային դիմացը

Գործակալութիւնք՝ Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ